

**ՏՆԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
(IN-HOME SUPPORTIVE SERVICES, IHSS) ԾՐԱԳԻՐ
ԾԱՆՈՒՑՈՒՄ ԴԻՄՈՐԴԻՆ՝ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ
ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ՄԱՍԻՆ**

Նահանգային օրենքը (Բարեկեցության և հիմնարկությունների օրենքի մաս 12309.1) պահանջում է, որ IHSS-ի համար դիմող յուրաքանչյուր անձ տրամադրի առողջապահական խնամքի վկայագրում առողջապահական խնամքի արտոնագրված մասնագետից (licensed health care professional, LHCP), նախքան նա կկարողանա IHSS-ի ստանալ:

Վկայագրումը պետք է կատարվի LHCP-ի կողմից, ինչպես օրինակ՝ բժիշկ, բժշկի օգնական, տարածաշրջանային կենտրոնի կլինիկական մասնագետ կամ կլինիկական վերահսկիչ, աշխատանքային թերապևտ, ֆիզիկական թերապևտ, հոգեբույժ, հոգեբան, օպտոմետրիստ, ակնաբան, հանրային առողջության բուժբույր և այլն:

Վկայագրումը պետք է նշի, որ դուք ինքնություն ի վիճակի չեք կատարել առօրյա կյանքի որոշ գործողություններ (activities of daily living, ADLs), և որ առանց օգնության դրանք կատարելու համար, դուք տնից դուրս խնամքի համար տեղափոխվելու վտանգի տակ կլինեք:

Հիմնական ADL-ներից են՝ ուտելը, լողանալը, հագնվելը, գուգարանից օգտվելը, քայլելը ու անկողնուց կամ աթոռից վեր կենալը: Այլ ADL-ներից են՝ տան գործեր, սննդի պատրաստում, սննդի և այլ անհրաժեշտ պարագաների գնումներ, դեղերի ընդունում և այլն:

Կցված է Առողջապահական խնամքի վկայագրման ձևաթղթի (SOC 873) մաքուր պատճենը, որը կարող եք տալ ձեր LHCP-ին լրացնելու համար: Եթե ցանկանում եք, վարչաշրջանը կարող է ուղարկել այն ձեր LHCP-ին ձեզ համար, սակայն դուք պետք է վարչաշրջանին տրամադրեք ձեր LHCP-ի անունն ու հասցեն:

Վարչաշրջանը կարող է այլընտրանքային փաստաթղթեր ընդունել SOC 873-ի փոխարեն, եթե դրանք համապատասխանում են հետևյալ բոլոր պահանջներին՝

1. Նշում է, որ դուք ի վիճակի չեք ինքնուրույն կատարել մեկ կամ ավելի ADL-ներ, և որ առանց ծառայությունների՝ դուք տնից դուրս խնամքի համար տեղափոխվելու վտանգի տակ եք,
2. Նկարագրում է բժշկական կամ այլ վիճակներ, որոնք արգելում են ձեզ ինքնուրույն կատարել ADL-ները, և որոնց հետևանքով ձեզ IHSS է հարկավոր, և
3. Ստորագրվել է LHCP-ի կողմից վերջին 60 օրվա ընթացքում:

Անկախ այն բանից, թե դուք եք տալիս SOC 873-ը LHCP-ին, թե վարչաշրջանն է այն ուղարկում, դուք եք պատասխանատու հավաստիանալ, որ այն լրացվել է ու վերադարձվել է վարչաշրջանին **45 օրվա** ընթացքում՝ վարչաշրջանի աշխատողի կողմից այն պահանջելու ամսաթվից:

Եթե վարչաշրջանին չտրամադրեք SOC 873-ը կամ այլընտրանքային փաստաթղթերը 45 օրվա ընթացքում, ձեր IHSS դիմումը կարող է մերժվել: Ինչպես բոլոր գործողությունների դեպքում, որոնք վարչաշրջանն իրագործում է ձեր գործի կապակցությամբ, դուք կարող եք նահանգային լսում խնդրել, եթե համաձայն չեք վարչաշրջանի որոշմանը:

Որոշ սահմանափակ դեպքերում, ինչպես օրինակ, երբ ծառայությունները հայցվում են, քանի որ ձեզ դուրս են գրում հիվանդանոցից կամ ծերանոցից, և ձեզ ծառայություններ են հարկավոր ապահով տուն վերադառնալու համար, կամ վարչաշրջանը որոշում է, որ դուք տնից դուրս խնամքի համար տեղափոխվելու վտանգի տակ եք, ապա վարչաշրջանը կարող է ձեզ բացառություն տալ, որը ձեզ թույլ կտա ժամանակավորապես IHSS ստանալ, մինչև որ վարչաշրջանը կստանա լրացված SOC 873-ը կամ այլընտրանքային փաստաթղթերը: Այնուամենայնիվ, նույնիսկ, եթե ձեզ բացառություն է տրվում, դուք միևնույն է պետք է տրամադրեք այս փաստաթղթերից մեկը վարչաշրջանին 45 օրվա ընթացքում՝ որոշելու համար, թե կարող եք արդյոք շարունակել IHSS-ի ստացումը: Եթե բացառություն եք ստանցել, սակայն չեք կարողանում ստանալ SOC 873 ձեր LHCP-ից 45 օրվա ընթացքում, զանգահարեք ձեր սոցիալական աշխատողին **նախքան վերջնաժամկետը**, և ասացեք նրան, ինչու չեք կարողանում բավարարել ժամկետը ու վարչաշրջանից լրացուցիչ ժամանակ խնդրեք:

Եթե հարցեր ունեք առողջապահական խնամքի վկայագրման պահանջի մասին, հարցրեք ձեր գործին կցված սոցիալական աշխատողին:

ՎԵՐՁՆԱԺԱՄԿԵՏՆ՝ ____/____/____